ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 թ.

№ 10 (1074)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԽՈՐՀՐԴՈՎ

Սեպտեմբերի 1-ը Մանկավարժական համալսարանում անսովոր եռուզեռով էր լցրել ֆակուլտետների լսարանները: Գիտելիքի, գրի և դպրության օրը համապատասխան ֆակուլտետներում դեկանները, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական խորհուրդների նախագահները հոգացել էին առաջին կուրսեցիների համար պատշաճ ընդունելություն կազմակերպելու մասին:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը պրոռեկտորների ուղեկցությամբ շրջեց համալսարանի մասնաշենքերում, շնորհավորեց դասախոսներին և ուսանողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, իսկ առաջին կուրսեցիներին հավաստիացրեց, որ ճիշտ մասնագիտություն են ընտրել և պիտի ձգտեն արժանի լինել ուսուցչի բարձր ու վեհ կոչմանը:

Ա. Խոեցյանը դեկանների հետ խոսեց ֆակուլտետների խնդիրների մասին՝ ➢2

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանում օգոստոսի 10-ին անցկացվեց ուսումնական տարվա առաջին գիտական խորհրդի նիստը: ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը այն համարեց խորհրդանշական՝ շնորհավորելով գիտխորհրդի անդամներին:

Ավանդույթի համաձայն ռեկտորը շնորհավորեց հոբելյարներին՝ մաղթելով աշխատանքային հաջողություններ:

Օրակարգի առաջին հարցը հասարակագիտության, համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի, ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության, պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների վարիչների ընտրությունն էր:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքում, որին ներկա էին գիտխորհրդի 60 անդամներից 52-ը, համապատասխան ամբիոնների վարիչներ ընտրվեցին պաշտոնակատարներ քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Շիրինյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Միքայելյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Նարինե Սահակյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Կարեն Գևորգյանը:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց գիտական կոչումների շնորհման ներկայացված թեկնածուներին: Պրոֆեսորի գիտական կոչման ներկայացված՝ մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մանուկ Մկրտչյանի և դոցենտի գիտական կոչման ներկայացված՝ մանկավարժության ամբիոնի դասախոս Գայանե Եգանյանի օգտին քվեարկեց ներկաների մեծամասնությունը:

ՀՊՄՀ գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց համալսարանի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա աշխա- ➢3

Մանկավարժական համալսարանում նշանակվեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

«Բավարարվել ոչ միայն կադրերի պատրաստմամբ, այլև սերունդներին փոխանցել կրթական կայուն համակարգ»

Օգոստոսի 26-ին Մանկավարժական համալսարանում անցկացվեց ռեկտորատի ընդլայնված նիստ, որին մասնակցում էին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Դումանյանը և նախարարի տեղակալ, կենսաբանական գիտությունների դոկտոր Կարեն Թռչունյանը:

Նախարարը շնորհակալանքի խոսք ասաց համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գործունեության մասին, նաև խոսեց Բարձրագույն կրթության օրենքի մասին՝ մեկնաբանելով հոգաբարձուների խորհրդի ձևավորման սկզբունքներն ու մեխանիզմները:

Համալսարանի առայժմ երեք հոգուց բաղկացած խորհուրդը որոշել է ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աշոտ Խոեցյանին: Նախարարը համոզմունք հայտնեց, որ Աշոտ Խոեցյանը ոչ միայն կշարունակի համալսարանի զարգացման ու առաջընթացի քաղաքականությունը, այլև նոր հաջողություններ կամրագրի իր մասնագիտության ոլորտում:

Ըստ ԿԳՄՍ նախարարի՝ բուհերի համար կարևոր է աշխատանքային միջավայրի ստեղծումը, իսկ օրենքը պետք է ծառայի ոլորտին, ոչ թե ոլորտը՝ օրենքին: Այս տրամաբանութ- ➢2

Մի՞թե մենք՝ հայ մտավորականներս, անարժան կերպով մեր անձնական ու կուսակցական հաշիվների համար պիտի զոհաբերենք մեր Ժողովրդի պատիվը, կյանքը, ողջ ապագան:

Անթիվ են հայ մտավորականության մեղքերը հայ ժողովրդի առաջ, անհամար են նրա սխալները, սակայն չմոռանանք, որ այսօրվա սխալն անուղղելի կլինի, այսօրվա մեղքը՝ մահացու: Եվ այդ գիտակցելով, ելնենք այս պատմական րոպեին, կազմակերպված ուժերով կանգնենք որպես մի մարդ, մի կամք, մի հոգի:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

«Բավարարվել ոչ միայն կադրերի պատրաստմամբ...»

➢1 յամբ էլ պետք է զարգանա բուհական համակարգը:

Նախարարը հետաքրքրվեց բուհի կառուցվածքին, ստորաբաժանումներին, պրոֆեսորադասախոսական կազմին ու հաստիքների վճարումներին վերաբերող հարցերով, որոնց մասին տեղեկություններ ներկայացրեց ՀՊՄՀ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը:

Այնուհետև նախարարը ներկայացրեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանին՝ ընդգծելով գիտնականի պրոֆեսիոնալիզմը և աշխատանքային գործունեությունը:

Աշոտ Խոեցյանը շնորհակալություն հայտնեց իր թեկնածությունն առաջադրելու համար և սեղմ ներկայացրեց բուհի կրթական զարգացման ու առաջիկա գործունեության իր մի քանի նկատառումները:

ԵՊՀ-ում 28 տարի, ՀՊՄՀ-ում՝ 8 տարի, տարբեր տարիների դեկան և ամբիոնի վարիչ աշխատած աշխարհագրագետ գիտնականն իր ելույթում կարևորեց համալսարանում մարդկային հարաբերությունների, բարեխիղճ աշխատանքի և աշխատանքային բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումն ու փոխանցումը, իսկ մնացած գործընթացներն արդեն ենթադրում են որոշակի ժամանակ: Ըստ Ա. Խոեցյանի՝ պետք է քայլել համաշխարհային զարգացումներին համընթաց՝ միաժամանակ դիմակայելով դարի և կրթության ոլորտի մարտահրավերներին, որոնք բավականին լուրջ խնդիրներ են առաջադրում:

«Պետք է պահպանել բուհի կարգավիճակը և համաշխարհային կրթական զարգացումներին զուգահեռ ապահովել կայուն կրթություն՝ բավարարվելով ոչ միայն կադրերի պատրաստմամբ, այլև սերունդներին փոխանցելով գիտակրթական համակարգ»,- ասաց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Խոեցյանը՝ հույս հայտնելով, որ առաջիկայում կստեղծվի հավակնոտ թիմ և թիմային ուժերով խնդիրներին կտրվեն պատշաճ լուծումներ:

«Մանկավարժությունն ամեն ինչ է, այն ստրատեգիական ուղղություն է»՝ համոզված է ԿԳՄՍ նախարարը, միաժամանակ մատնանշեց, որ կրթական համակարգում առկա են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես մարզերի և սահմանամերձ մարզերի կրթական հաստատություններում: Նրա կարծիքով՝ կա դասական մանկավարժության դիֆիցիտ, և որ ցանկությունն է՝ ունենալ միայն բարձր որակի մանկավարժներ:

Նախարարի՝ ուսուցիչը նախևառաջ պետք է լավ մասնագետ լինի հարցադրմանը ՀՊՄՀ պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը հավելեց, որ ուսուցիչը պետք է անպայման ունենա մանկավարժահոգեբանական որակներ, առանց որի հնարավոր չէ դասավանդել որևէ մասնագիտություն:

Հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի վարիչ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն էլ խոսեց մագիստրատուրայում արևմտահայ դասընթաց մտցնելու անհրաժեշտության մասին:

Նախարարն էլ ամփոփեց՝ ղեկավարը՝ նախարար, թե ռեկտոր, չպետք է խանգարի աշխատողին, այլ աջակցի միասնաբար լուծելու կրթական զարգացումների ճանապարհին հանդիպող խնդիրները:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԽՈՐՀՐԴՈՎ

➢1 առաջարկելով իր աջակցությունը ուսումնական գործընթացին նպաստող տարբեր հարցերում:

Կուլտուրայի ֆակուլտետում պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն

Գևորգյանը ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին ներկայացրեց տաղավարները, որտեղ մոտ ապագայում կգործի պարի թանգարան, ուր քրիստոնեական շրջանից սկսած կներկայացվի պարի էվոլյուցիան մինչև մեր օրերը:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը խրախուսեց իր գործի նվիրյալ Կ. Գևորգյանի նախաձեռնությունը՝ ընդգծելով ստեղծվելիք եզակի թանգարանի գործնական ու կիրառական նշանակությունը:

«Այսօր Գիտելիքի և դպրության օրն է: Բոլոր ժամանակներում գիտության լույսը սիրո և ակնածանքի

առարկա է եղել: Այդպիսին է եղել նաև Ուսուցիչը: Նրան վստահել են և հավատացել... Շնորհավորում եմ ներկա և ապագա բոլոր ուսուցիչներին, աշակերտներին,

ուսանողներին, դասախոսներին, գիտության բնագավառի աշխատողներին»,-ասաց Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը՝ դիմավորելով ուսանողներին:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան Գագիկ Դեմիրխանյանն առաջին կուրսեցիներին հանգամանորեն ներկայացրեց ֆակուլտետի մասնագիտությունների առանձնահատկությունները, հորդորեց մասնագիտական կրթությանը զուգահեռ լավ տիրապետել նաև օտար լեզուներին՝ ասվածը պայմանավորելով մասնագիտական ընդլայնման հեռանկարով:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանը ողջունեց առաջին կուրսեցիների մուտքը համալսարան՝ կարևորելով նրանց ընտրած մասնագիտությունը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը խոսեց համավարակի և պատերազմի արդյունքում մարդկային և արժեքների կորստի մասին՝ ապագա հոգեբաններին և սոցիալական աշխատողներին հորդորելով ցուցաբե-

րել բարձր պատասխանատվություն դրանց հետևանքների վերացման համար:

Հավելենք, որ այս ուսումնական տարում Մանկավարժական համալսարանի բակալավրի ուսումնական ծրագրով ընդունվել է շուրջ 1000 ուսանող: Սերնդակրթության երթը շարունակական է, առաջին քայլն արված է, մնում է առաջին կուրսեցիներին մաղթել խաղաղ տարի, ուսումնական գործընթացներին ակտիվ մասնակցություն և ընտրած մասնագիտությանն ու կոչմանն արժանի լինելու մեծագույն պատասխանատվություն:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

➢1 տանքների ծրագիրը, որը հաստատվեց գիտխորհրդի անդամների կողմից:

Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը:

Ապա պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

Խորհրդի անդամներն անցան ընթացիկ հարցերի քննարկմանը. հաստատեցին ատենախոսությունների թեմաները, երաշխավորեցին գրքերի հրատարակությունը, լսեցին պրոռեկտոր Նիեր Մելիք-Բախշյանի զեկուցումը համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի (առկա և հեռակա համակարգ) մասնագիտությունների, քննությունների, տեղերի, ուսման վարձերի և նախապատրաստական բաժնի ուսման վարձերի մասին:

Լսեցին գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի զեկուցումը համալսարանի զոհված ուսանողներին «Մանկավարժական համալսարան» մեդալով հետմահու պարգևատրելու մասին:

Գիտական խորհուրդը բոլոր հարցերի վերաբերյալ որոշումներ կայացրեց:

Համալսարանին կից գիտական և ուսումնամեթոդական հարցերի հանձնաժողովի 2020-2021 ուստարվա կատարած աշխատանքները խորհուրդը գնահատեց «բավարար»:

Համալսարանի գիտական խորհուրդը հաստատեց 2022-2023 ուսումնական տարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա համակարգերի մասնագիտությունները, ընդունելության քննությունները, տեղերը և ուսման վարձերը, ինչպես նաև 2022-2023 ուստարվա նախապատրաստական բաժնի ուսման վարձավճարները ըստ մասնագիտությունների:

ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին զեկուցման վերաբերյալ խորհուրդը որոշեց հանձնարարականներ տալ ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին՝ ավարտական աշխատանքներից և մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առաջ ամբիոնների նիստերում լսել թեզերի ղեկավարներ հաղորդումները և երաշխավորել միայն համապատասխան մակարդակ ունեցող աշխատանքները, թեմաները հաստատելիս հաշվի առնել նրանց արդիականությունը:

Քննարկվող հարցերի և զեկուցումների շուրջ ամփոփումներ անելով, ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը ներկայացրեց մի շարք կարևոր նկատառումներ՝ ատեստավորման խնդիրը պետք է դառնա որակավորման թիվ մեկ խնդիրը, այն պետք է դարձնել լուրջ քննարկման առարկա, անընդհատ կատարելագործումը չպետք է չափ ու սահման ունենա՝ խոր արհեստավարժություն, պրոֆեսիոնալիզմ, հետազոտական-գիտական հետևողական մոտեցում, տեխնոլոգիա և գիտական մշակույթ, ակադեմիզմ...

Աշոտ Խոեցյանը վստահ է. «Սրանք այն հիմնական ուղղություններն են, որոնց հետևողականորեն հետամուտ լինելով, համալսարանի պրոֆեսորադասախոսական ներուժը կարող է հասնել բոլոր խնդիրների լուծմանը»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒԽ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

«Մենք մտածողության փոփոխության կարիք ունենք»,-

ԱԱԱԾ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՇՈՏ ԽՈԵՑՅԱՆԸ

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը օգոստոսի 31-ին հանդիպեց բուհի ուսանողական խորհրդի անդամների, ֆակուլտետների ուխ նախագահների և նրանց տեղակալների հետ: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի նպատակը որուսանողական ակտիվի հետ ծանոթանալն էր:

«Դուք երիտասարդ եք և շատ երազանքներ ունեք, իսկ երազանքն առաջ շարժվելու լավագույն գրավականն է: Երազանքը տանում է առաջ, հասցնում հաջողությունների,-ասաց Ա. Խոեցյանը:-Բոլոր տարիքներում պետք է երազել. դա կօգնի երիտասարդ մնալ, իսկ փորձառությունը կօգնի իրականացնել դրանք»:

Ա. Խոեցյանը խոսեց վերջին տարիներին Մանկավարժական համալսարանի արձանագրած հաջողությունների ու առաջընթացի մասին՝ հավելելով, որ չպետք է սահմանափակվել ձեռք բերածով: Լաբորանտից մինչև ամբիոնի վարիչ ու դեկան աշխատած մարդու, գիտնականի կենսափորձով նա ուսանողներին ասաց, որ ապագայի ուսուցիչը գիտելիքներ փոխանցողից պետք է վերածվի գործնական մտավորականի և ուսուցչի: Ժամանակակից տեխնոլոգիաները նրան շատ հնարավորություններ են տալիս՝ սովորողների մեջ ձևավորելու հմտություններ, որոնցով կկարողանան կրթությունը դարձնել շահութաբեր: Այսօր կրթության ոլորտի մասնագետները ամենացածր

վարձատրվողներն են, և Ա. Խոեցյանի տեսլականում համալսարանի բոլոր մասնագիտությունների բիզնես հնարավորությունների բացահայտումն է, ինչը հորդորում է նաև դեկաններին: Յուրաքանչյուր ժամանակահատված համահունչ քայլեր է պահանջում, ուստի պետք է զարգացնել բիզնես մտածողությունը և այն ծառայեցնել կրթության բովանդակության առաջընթացին:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը ուսանողներին հորդորեց ակտիվ լինել, որովհետև նրանց տարիքը լավագույնն է հետաքրքիր մտահղացումներ իրականացնելու համար, իսկ փորձառության հարցում կօգնեն ժամանակակից տեխնոլոգիաները:

«Մենք մտածողության փոփոխության կարիք ունենք: Իմ կյանքում երազանքը շատ մեծ տեղ ունի: Այն մարդը, ով երազում է և դրան հասնելու քայլեր է անում, անշուշտ մեծ ապագա ունի»,-ասաց Ա. Խոեցյանը՝ կրկին բարձրաձայնելով, որ առանց ուսանողների բուհի հնարավոր զարգացումների տեսլականը չի կարող իրականություն դառնալ:

Ռեկտորի պաշտոնակատարը առողջություն մաղթեց ուսանողներին, հորդորեց ձեռք բերել մասնագիտական գիտելիքներ, սովորել լեզուներ և չկորցնել երազելու ունակությունը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Նորամուտը՝ հիմնանորոգված դպրոցում

Նոր ուսումնական տարին՝ նոր, հիմնավերանորոգված շենքում: Կատարվեց տարիների երազանքը. Մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի այս սերնդին բախտ վիճակվեց սովորել հարմարավետ ու գեղեցիկ կահավորված դպրոցում: Սեպտեմբերի 1-ին 7 ենթահոսքի 145 աշակերտի նորամուտը վարժարան նշանավորվեց այս երազանքի իրականությամբ:

Գիտելիքի օրվա հանդիսությունն սկսվեց ՀՀ պետական դրոշի բարձրացմամբ, որի պատվին էր արժանացել Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից, վարժարանի շրջանավարտ Յուրի Ղազարյանը:

Վարժարանի օրհնության և օծման կարգ կատարեց Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հովիվ տեր Առնակ քահանան, ով շնորհավորեց ուսումնական տարեսկզբի և հիմնանորոգված մասնաշենքի առիթով:

«Սիրելի ներկաներ, մաղթում եմ մեկ կարևոր բան՝ իմաստության ամբարում որքան հնարավոր է շատ. բոլորս այսօր այդ իմաստության կարիքն ունենք: Միայն գիտելիքը չէ, որ կարող է առաջնորդել, այլ այդ գիտելիքի միջոցով ձեռք բերված իմաստությունը: Այդ իմաստության մեջ հաստատուն եղեք, մեր ժողովրդի միասնականությունը, հաղթանակն ու ունեցած ոգին միայն հնարավոր է ամրացնել ու զորացնել իմաստության շնորհիվ»,-ասաց տեր Առնակ քահանան:

Վարժարանցիների նորամուտը շնորհավորեց նաև Մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը: Նա սովորողներին մաղթեց հաջողություններ ու բազմաթիվ ձեռքբերումներ նոր ուսումնական տարում՝ վստահ, որ օրվա խորհուրդը մնալու է բոլորի հիշողություններում՝ ուղեկցելով տարածության ու ժամանակի մեջ: Հասարակությունը կարևոր վերաբերմունք ունի պետության ողնաշարը հանդիսացող կրթության նկատմամբ, և այդ վերաբերմունքի ներքո ռեկտորի պաշտոնակատարը կարևորեց վարժարանի հիմնանորոգման գործում բոլորի դերակատարումը՝ հույս հայտնելով, որ ուսումնական լավագույն պայմանները կնպաստեն առավել լավ սովորելուն:

«Ամուր սիրով, երախտագիտությամբ, հոգուս ողջ ջերմությամբ շնորհավորում եմ բոլորիս գիտելիքի օրվա և հիմնանորոգված դպրոցի բացման կապակցությամբ»,- ասաց վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը՝ մաղթելով հաջողություններ, ուսումնառության, ազգային դպրոցի և դաստիարակության հայրենանվեր գործում:

«Կրթության բնագավառի բոլոր նվիրյալներին խաղաղ երկնքի տակ հաջող և արգասաբեր ուսումնական տարի եմ մաղթում: Թող սեպտեմբերի 1-ը դառնա լուսավոր ու մեծ ճանապարհի սկիզբ: Մեծ պատիվ ու պատասխանատվություն է լինել առաջին հենակետային վարժարանի տնօրեն, սակայն դա իմ և ձեզ համար կրկնակի պատասխանատվություն է: Սիրելի՛ աշակերտներ, մենք պարտք ունենք կատարելու և այսօր մեկ բան է կարևոր՝ յուրաքանչյուրս մեր տեղում մեր գործն այսուհետ էլ ավելի լավ պետք է կատարենք: Ուզում եմ խոստովանել՝ հիմնանորոգված շենքի բացումը կատարված երազանք էր, հավաստիացնում եմ, որ վարժարանի հիմնադրման օրից 28 տարվա յուրաքանչյուր օր երազել եմ այսպիսի շենքում ու պայմաններում մեր գործը պատվով կատարելու մասին: Այսօր ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում ամենօրյա և հետևողական աշխատանքի շնորհիվ իրականացավ այս նախաձեռնությունը»:

Ավագ դպրոց-վարժարանի նոր մասնաշենքը հիմնավերանորոգվել է ՀՀ ԿԳՄՍ- «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ ՊՀ «Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը» ենթաբաղադրիչի աշխատանքների շրջանակներում: Այն հաճելիորեն զարմացրեց աշակերտներին, ծնողներին, հյուրերին: Այսուհետ վարժարանի 433 աշակերտների ուսուցումը կկազմակերպվի ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորված դպրոցում, ուր բացի ուսումնական գործընթացին անհրաժեշտ կաբինետներից, կա նաև արևային ջեռուցման համակարգ:

Բարի երթ, սիրելի՛ վարժարանականներ: Եղեք արժանի ձեզ համար ջանք ու եռանդ չխնայող նվիրյալներին, ամբարեք գիտելիքներ, որ կերտեք մեր երկրի վաղվա օրը:

Համալսարանական դպրոցում ուսումնական տարվա մեկնարկը տրված է

Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցը օգոստոսի 31-ին իր հյուրընկալ դռները բացեց առաջին դասարանցիների առաջ: Այս տարի դպրոցում բացվել է երկու առաջին դասարան, ուր կսովորի 60 աշակերտ:

Դպրոցն ունի լավ ավանդույթներ. այստեղ յուրաքանչյուր նոր միտք ու գաղափար տոնական երանգներ են ստանում և սովորողների առօրյան դարձնում առավել հետաքրքիր, որովհետև դպրոցը միայն ուսումնական գործընթացը չի, այլև ուղեկցող միջոցառումներն են, որոնք երեխաների մեջ սովորելու հանդեպ հետաքրքրություն ու սեր են առաջացնում:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը հավաստիացրեց, որ առաջին դասարանցիները նախօրոք այցելել են դպրոց, եղել դասասենյակներում, ծանոթացել դասվարների հետ, նկարչությամբ զբաղվել, նաև մասնակցել են չորրորդ դասարանի տարեվերջյան մի գեղեցիկ հանդեսի:

Սեպտեմբերի 1-ին ուսումնական տարին սկսվեց նաև բարձր դասարանցիների համար: Դպրոցի աշակերտների թիվը 500 է: Դե ինչ, ուսումնական տարվա մեկնարկը տրված է: Գիտելիքի ու դպրության օրն իր իրավունքների մեջ է, մաղթենք խաղաղ ուսումնական տարի՝ հագեցած գիտելիքների ձեռքբերման անհագուրդ ծարավով ու հաճելի միջոցառումների անակնկալներով:

Ս. ԱՍՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՀԱՅ ԵՐԵՎԵԼԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սեպտեմբերի 7-ին անցկացվեց երկու գրքի՝ Մայր աթոռի հրատարակությամբ լույս տեսած «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» փաստաթղթերի ժողովածուի (Ըստ հայ ազգային արխիվի նյութերի) հերթական համարի՝ նվիրված Տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին, որը կազմել էր պատմական գիտությունների թեկնածու Գոհար Ավագյանը, և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ հրատարակված «Նիկողայոս Ադոնցը միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ և հայագետ» հոդվածների ժողովածուի շնորհանդեսը:

Նիկողայոս Ադոնցի 150-ամյակի առթիվ հրատարակված հոդվածների ժողովածուի խմբագիր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանի ուղեկցությամբ Բանասիրական ֆակուլտետի դասախոսները և ուսանողները շրջեցին Մայր Աթոռի հոյակերտ Մատենադարանում, ակնածանքով ծանոթացան հին գրքերի և ձեռագրերի շքեղ պահոցին՝ զգալով հազվագյուտ մատյանների շունչը:

Շնորհանդեսը բացեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարանի և հրատարակչության տնօրեն Տ. Արարատ քահանա Պողոսյանը, ապա ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը, ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, Հայաստանի ազգային արխիվի փոխտնօրեն, պատմաբան Ավագ Հարությունյանը, ովքեր արժևորեցին ժողովածուները և անդրադարձան հայոց պատմության երկու երևելի գործիչների՝ Տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի և Նիկողայոս Ադոնցի կյանքի առանձին դրվագներին ու ազգանվեր գործունեությանը:

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը շատ բարձր արժեքներ ունեցող հրատարակություններ համարեց շնորհանդեսի ներկայացված գրքերը՝ առաջինը կարևորելով ժանրային, իսկ երկրորդը՝ հետազոտական տեսանկյունից:

ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը հանգամանորեն ներկայացրեց «Նիկողայոս Ադոնցը միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ և հայագետ» հոդվածների ժողովածուն, որտեղ զետեղվել են Ադոնցի հսկայական ժառանգության առանձին խնդիրներին նվիրված հոդվածներ, ներկաների առաջ բացելով Ն. Ադոնց գիտնականի կյանքի ու գործունեության ազգօգուտ շերտերը:

Ժողովածուում տեղ են գտել ֆակուլտետի շրջանավարտ գիտնականների ու մանկավարժների հոդվածները՝ նախատեսված ուսանողների և Ն. Ադոնցի կյանքով ու ստեղծագործությամբ հետաքրքրվողների համար:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը նկատեց՝ մեծ խորհուրդ ունի այն իրողությունը, որ հայրենիքից դուրս ստեղծագործած և ազգանվեր գործունեություն ծավալած երկու հայ մեծագույն գործիչներին նվիրված ժողովածուների շնորհանդեսը կազմակերպվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

«Տարին հոբելյանական է միջազգային հռչակ վայելող բյուզանդագետ, հայագետ, մանկավարժի համար, ով ազնվական ծագում ուներ, ստացել էր փայլուն կրթություն՝ գերազանցությամբ, ավարտել էր Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ու պատմաբանական ֆակուլտետները, կատարելագործվել Փարիզի, Լոնդոնի, Մյունխենի, Ստրասբուրգի համալսարաններում, պարապել վերոհիշյալ քաղաքների, ինչպես նաև Վենետիկի ու Վիեննայի մատենադարաններում: Գիտնականն աչքի է ընկել օտար լեզուների հմուտ իմացությամբ, որոնցով դասավանդել է Պետերբուրգի և Բրյուսելի համալսարաններում,-ասաց բանախոսը:-Միաժամանակ Ն. Ադոնցը եղել է Հայկական հարցի և Հայ դատի նվիրյալ պաշտպաններից, նրա բազմաթիվ հոդվածները տպագրվել են եվրոպական նշանավոր պարբերականներում:

Նրա ութ կոթողային աշխատությունները հիրավի հայագիտության հարուստ էջերից են, որ պատիվ են բերում ոչ միայն հայագիտությանն, այլև համաշխարհային նշանակություն ունեն»:

Աելիտա Դոլուխանյանը մեջբերում արեց ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեից, թե ինչպես է սեպագրերի ընթերցանությամբ Ն Ադոնցը փաստել, որ «Ուրարտուն Հայաստանն է, թե Բյուզանդիան որքան է պարտք Հայաստանին դեռևս «մակեդոնական» մեծ հարստությունից, որը ծերացած պետության առջև բացեց 10-րդ դարի վերածննդի դռները»:

Ն. Ադոնցի սան Մուշեղ Իշխանը լավագույնս բնութագրել է իր Ուսուցչին.«Հայաստանը կարծես Նիկողայոս Ադոնցն էր, նրա լավագույն հատկանիշների մարմնացումը, նրա մարդկային պատկերը»:

Բանախոսն անդրադարձավ Ն. Ադոնցի գործունեության տարբեր դրվագներին, ընդգծեց, որ հայագետի իդեալը Տիգրան Մեծն էր և նրա ստեղծած հզոր Հայաստանը, գիտնական, ով հայերի հարատևության ընթացքը տեսնում էր հայ առաքելական եկեղեցու, հայոց լեզվի ու հայագիտական մտքի միասնության հանգրվանում:

Պրոֆեսորը մեկ անգամ ևս ընդգծեց, որ հոդվածների ժողովածուի հրատարակումը հարգանքի փոքրիկ տուրք է մեծ հայագետի ու հայրենասերի հիշատակի առաջ, և որ հայ երիտասարդները պետք է իմանան Ն. Ադոնցի կերպարի մասին և ինչ-որ չափով նմանվեն նրան:

«Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարի ներկա ԻԳ հատորը, որ նվիրված էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ականավոր անդամ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին, փաստաթղթերի և նյութերի մի ստվարածավալ ժողովածու էր, որի մասին խոսեց պատմական գիտությունների թեկնածու Գոհար Ավագյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց 1912-1948 թվականներին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին, որը հսկայական դեր է ունեցել պարկահայ գաղթօջախի կյանքում:

Հավելենք, որ հրատարակված վավերագրերը լուսաբանում են ոչ միայն նրա կյանքի տարբեր փուլերը, այլև ժամանակի հայ եկեղեցու պատմության գրեթե բոլոր առանցքային հարցերը:

Շնորհանդեսն ավարտվեց Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ելույթով ու օրհնության խոսքով:

Ս. ԱՍՐՅԱՆ

ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՀ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԵՏ

Մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ հանդիպում-քննարկում Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի AFALOG աֆազիայի հաղթահարման և մասնագետների վերապատրաստման կենտրոնի հիմնադիր-տնօրեն, նեյրոլոգոպեդ Մարլենա Պուխովսկայայի հետ: Նա նաև Ա. Յուրաշի անվան թիվ 1 համալսարանական հիվանդանոցի պրոֆեսոր է, Բանկային բարձրագույն դպրոցի նեյրոլոգոպեդիայի հետազոտական կրթության բաժնի վարիչ:

Բանախոսը Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսներին և ուսանողությանը ներկայացրեց իր փորձը «աֆազիա» ունեցող անձանց հետ տարվող պրակտիկ գործունեությունից, ինչպես նաև անդրադարձավ շտկման ժամանակակից մեթոդների կիրառման հիմնախնդիրներին:

Մարլենա Պուխովսկայան լսարանին ներկայացրեց աֆազիայի առաջացման պատճառները, ռիպացին գործոնները՝ հանգամանորեն անդրադառնալով աֆազիայի դասակարգմանը, հետազոտմանն ու ախտորոշմանը: Նա կարևորեց գլխուղեղի կաթվածից հետո տարվող լոգոպեդական, ինչպես նաև այցելուի ընտանիքի անդամների հետ աշխատանքը:

Բանախոսը խոսեց Լեհաստանում աֆազիայի դեպքերի հաճախականության և բուժման ընթացքի արդյունավետության մասին, նաև կարևորեց մասնագիտական թիմի համագործակցությունը:

Խոսելով հիվանդության դասակարգման մասին՝ նա ընդգծեց, որ Լեհաստանի հիվանդանոցներում առավել կիրառելի է դասական դասակարգումը:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սիրանուշ Կարապետյանը ներկայացրեց հյուրին որպես իր ոլորտի լավագույն մասնագետի, ում հեղինակային մեթոդները քննություն են բռնել ոլորտի առաջատար մասնագետների շրջանում:

Դեկանը կարևորեց մասնագիտության շրջանակներում միջազգային համագործակցությունն ու փորձի փոխանակումը: Անդրադառնալով աֆազիային՝ որպես լոգոպեդիայի արդի և կարևոր հիմնահարցի, նա հատկապես արժևորեց ուսանողների ակտիվ մասնակցությունը նման տեսագործնական քննարկումներին: Ծավալվեց ակտիվ քննարկում, տեղի ունեցավ փորձի փոխանակում, եղավ հարց ու պատասխան:

Բանախոսն իր հետ բերել էր դասագիրք, որտեղ ուղորդումներ կային՝ ուղղված չխոսողներին, նրանց ընտանիքի անդամներին և մասնագետներին: Ձեռնարկը մեծապես աջակցում է բոլոր նրանց, ովքեր փորձում են չխոսողների հիմնահարցերի լուծմանն ուղղված առաջադրանքներով աշխատել:

Հանդիպման վերջում տեղի ունեցավ տարբեր դեպքերի քննարկում և փորձի փոխանակում: Լեհ գործընկերը պատրաստակամություն հայտնեց հետագա համագործակցության:

Ֆիլմի ցուցադրություն

1960-ականները հայ մշակույթի պատմության ոսկեդարն է

Թեքեյան մշակութային միությունում տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի Լրատվության և հանրության հետ կապերի վարչության ստեղծած «Ձնհալն արվեստում» ֆիլմի ցուցադրությունը: Ֆիլմի սցենարի հեղինակը Դիանա Մարկոսյանն է, ռեժիսորը՝ Արտյոմ Աղասարյանը, օպերատորը՝ Հրայր Սիրականյանը, մոնտաժող ռեժիսորը՝ Արթուր Փարսյանը:

Ֆիլմը ստեղծվել է ՌԴ-ում անցկացվելիք ամենամյա վավերագրական ֆիլմերի փառատոնին ներկայացնելու նպատակով, սակայն մինչ պարզ կլինեն արդյունքները, հայ հանդիսատեսն այն դիտեց Թեքեյան մշակութային միությունում կազմակերպված ցուցադրությանը:

«Ճանապարհ դեպի կրկես», «Նռան գույնը», «Բարև, ես եմ», «Մենք ենք, մեր սարերը», «Եռանկյունի», «Առաջին սիրո երգը» ֆիլմերի միջոցով ստեղծագործական խումբը դիտողին տեղափոխում է անցյալ, վերադարձնում այն ժամանակը, որ ստեղծեց հզոր անհատներ, պարգևեց մնայուն արժեքներգ դա այն ժամանակն էր, երբ մարդն ազատ էր: Այդ ժամանակաշրջանը բնութագրվեց որպես ձնհալ, ձնհալ արվեստում:

Ֆիլմում 60-ականների կինոն ներկայացվում է իբրև ռեժիսորների, դերասանների, օպերատորների, սցենարիստների, նկարիչների ու երաժիշտների ոսկե սերնդի համախումբ: Կազմակերպված ցուցադրությանը քիչ չէին 60-ականների ժամանակակիցները. նրանք միակարծիք են՝ տեսաֆիլմը յուրահատուկ մոտեցմամբ վերադարձրեց այն տասնամյակը, որն իսկապես ստեղծեց մնայուն արժեքներ:

Իսկ երիտասարդ հանդիսատեսի համար ֆիլմն ավելի շատ ճանաչողական է. ժամանակի հերոսը ֆիզիկոս գիտնականն էր («Բարև, ես եմ»): Ֆիլմի ստեղծողները 33 րոպեում համադրել են փաստերն ու ժամանակակիցների՝ պատմաբան Ռուբեն Միրզախանյանի, արվեստաբան Դավիթ Մուրադյանի և կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանի վերլուծությունները:

Թեքեյան մշակութային միության նախագահ, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Միրզախանյանը, խոսելով 60-ականների մասին, ընդգծեց. «Փաստ է, որ այդ ժամանակ մարդիկ տարեցտարի ավելի լավ էին ապրում, և հենց այդ ժամանակ էր հնարավոր վերականգնել արվեստի այնպիսի ճյուղ, ինչպիսին կինոն է. «Դա այն ժամանակներն էր, երբ նույնիսկ միմյանցից տարբեր մարդկանց միավորում էր մեկ ընդհանուր գիծ՝ հավատը դեպի լուսավոր ապագան»:

Ռուբեն Միրզախանյանի համար ուրախալի է հատկապես այն հանգամանքը, որ ֆիլմի երիտասարդ դիտողներին այն հետաքրքրում է և «հենց այդ պահին հասկանում ես՝ ամեն ինչ վերջացած չէ»:

Ֆիլմի հեղինակ Դիանա Մարկոսյանը մասնագիտության բերումով առնվազն երկու տասնամյակ բարեբախտություն է ունեցել շփվել մտավորականների, արվեստի նվիրյալների, մշակույթի բազմաթիվ գործիչների հետ: Խոստովանում է՝ այդ հաճախակի շփումները, զրույցները հայկական մշակույթի, գիտության ոսկեդարի մասին հանգել են 60-ական թվականների մասին անմոռանալի հուշերի թարմացման անհրաժեշտության:

«Միշտ թաքուն երազանք եմ ունեցել ապրել այդ տարիների մեջ, գոնե ապրել նրանց ապրած կյանքով, ովքեր ազնիվ էին, շիտակ փոխհարաբերություններում, ովքեր ստեղծում ու արարում էին, երբ երիտասարդների զրույցի թեման արվեստն էր, կինոթատրոնում ցուցադրված վերջին ֆիլմի, կարդացած գրքի վերլուծությունն էր, երբ մարդիկ ապրում էին լիքը, հարուստ, ոգեղեն կյանքով: Ու միշտ մտածել եմ իմ սիրելի ժամանակի մասին ինչ-որ բան ստեղծել»,-նշում է ֆիլմի հեղինակն ու հավելում՝ վերջնական որոշումը ռեժիսորի հետ կայացրել են «Հայաստանը 1921-91 թթ.-ին» լաբորատորիայի կազմակերպած՝ «Հայաստանը 1945-1965 թթ.-ին» խորագրով գիտաժողովի ժամանակ, որտեղ հնչած մտքերն ու մթնոլորտն էլ տրամադրեցին ստեղծել նման ֆիլմ:

ՀՊՄՀ Լրատվության և հանրության հետ կապերի վարչության պետ Դիանա Մարկոսյանը նաև հավելեց՝ ֆիլմի ստեղծման նպատակը ոչ այնքան հաղթելն է փառատոնում, որքան հայրենիքից դուրս ներկայացնել մեր ազգային ես-ը, մեր դիմանկարը, աշխարհին մեր տվածը ու նաև հիշեցնել՝ կարմիրը միայն կորսված սերնդի արյան գույնը չէ, ինչպես արդարացի նկատել էր վերլուծաբան Սոնա Մելոյանը, այլ նաև նռան գույնը, պտղաբերության ու հավերժի:

«Ձնհալն արվեստում» ֆիլմը ռեժիսոր Արտյոմ Աղասարյանի առաջին քայլն է այս ժանրում: Անդրադառնալով ժամանակահատվածի ընտրությանը՝ վերջինս ընդգծեց, որ նույնիսկ պատմաբաններն են նկատում՝ 1960-ականները հայ մշակույթի պատմության ոսկեդարն է:

«Շատ կարևոր է ֆիլմի մասնակցությունը փառատոնին, սակայն կրկնակի կարևոր է, որ այն լինի նաև ուսուցողական. կծանոթացնի այդ ժամանակաշրջանին, կուղղորդի գնահատել մեր ունեցածն ու կխթանի նորովի ստեղծագործելուն»,-նշեց Արտյոմ Աղասարյանն ու խոստովանեց՝ միևնույն ժամանակ դժվար է խոսել մի ժամանակի մասին, որն ամենաշռայլը եղավ՝ ստեղծելով ժամանակի մարդուն բնութագրող կինոարվեստ:

Ֆիլմում ներկայացվեց ժամանակն իր ողջ խորությամբ, երբ ոչ թե տեսախցիկն էր ֆիքսում ժամանակը, այլ ժամանակն էր տեսախցիկի առջև, այսինքն՝ դարաշրջանը շնչում էր ֆիլմերում: Տարբեր ֆիլմերի վերլուծությամբ Ռուբեն Միրզախանյանը, Դավիթ Մուրադյանն ու Մարտին Վարդազարյանը վերհանեցին մի կարևոր հանգամանք՝ 60-ականները նոր փուլ էին, նշաձող, որից ներքև այդուհետ հնարավոր չէր ստեղծագործել: «Շնորհակալ ենք այդ ժամանակին»,-նշում են ֆիլմի հերոսներն ու ներկաներին հուշում՝ գուցե ձնհալն արվեստում դեռ չի ավարտվել և դեռ պետք է արարել ու ստեղծագործել:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայաստանի առաջին կին օդաչուն. Նինել ՂԱՐԱՋՅԱՆ

«Երկնային հեռուներում իմ հոգին խաղաղ կմնա, եթե երկրի վրա իմ ոտնահետքերը մամուռներով չպատվեն»:

Նինել ՂԱՐԱՋՅԱՆ

Հայաստանի առաջին կին օդաչու, պարաշյուտիստ, մանկավարժ Նինել Ղարաջյանը ծնվել է 1916 թվականի հունվարի 10-ին, Հոբարձի գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է մանկավարժական տեխնիկումում և ավարտել այն 1936 թվականին:

Առաջին հայ կին օդաչու և պարաշյուտիստ Նինել Ղարաջյանն իր առաջին թռիչքը կատարել է 1935 թ. ապրիլի 29-ին Երևանի օդանավակայանում՝ 600 մ բարձրությունից: Ընդհանուր առմամբ Նինել Ղարաջյանը կատարել է 14 պարաշյուտային և օդանավի 25 ինքնուրույն թռիչք:

1938-1941 թթ. նա սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Եղել է ՀԼԿԵՄ IX (1935) և ՀամԼԿԵՄ X համագումարների (1936) պատվիրակ:

Պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով, պատվոգրերով: 1972 թ. դեկտեմբերի 8-ին ստացել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգիր: Հայրենի գյուղն էլ նրան շնորհել է գյուղի պատվավոր բնակչի կոչում (1991, 17 օգոստոս):

Չնայած Նինել Ղարաջյանն ավելի շատ հայտնի է իր կատարած թռիչքներով, սակայն իր կյանքի մեծ մասը նա զբաղվել է մանկավարժությամբ: 1947թ.-ից նա աշխատել է Մանկավարժական ինստիտուտում, եղել է ՍՄԿԿ պատմության կաբինետի վարիչ, դասավանդել է: Մանկավարժական գործունեության սկիզբը նույնպես եղել է հատկանշական: Երբ Նինել Ղարաջյանին և նրա ամուսնուն գործուղում են Սիսիան՝ աշխատելու որպես ուսուցիչ, պարզվում է, որ ավրոակումբում տեղյակ չեն դրա մասին: Այդ պատճառով կոմերիտմիության Երևանի քաղաքային կոմիտեն նրան հեռացնում է կոմերիտմիությունից, սակայն ՀԼԿԵՄ կենտկոմը դա չի հաստատում:

28 տարեկանում կորցնելով ամուսնուն՝ Նինելը միայնակ է մեծացնում երեք որդիներին: Նինել Ղարաջյանի որդու՝ Վալերի Պողոսյանի համոզմամբ՝ մայրը, ում աշխատանքային տարբեր առաջարկներ էին անում, չի հեռացել Մանկավարժական ինստիտուտից, որպեսզի մոտ լինի իր որդիներին, որոնք բնակվում էին ինստիտուտի հանրակացարանում, որը բուհի շենքի վերևի հարկում էր:

«Գուցե նրա մասնագիտությունները տարբեր էին: Բայց ուսուցչի աշխատանքը ամենապատվավոր աշխատանքն էր այն ժամանակ,- ասում է Վ. Պողոսյանը:- Մյուս կողմից էլ կար երիտասարդական ավյունը, եռանդը, սխրանք գործելու ցանկությունը»:

Լիլիթ ՍԵՓՅԱՆ
ՀՊՄՀ թանգարանի ավագ գիտաշխատող

ՀՊՄՀ-ն սրտում

Փորձում եմ հիշել ինձ առաջին օրը համալսարանում, էլի երջանիկ դեմքով ու ժպիտով եմ հիշում, իսկ ավարտի ժամանակ էլի նույն ժպիտն էր, բայց մի քիչ թախծոտ: Փաստորեն ՀՊՄՀ-ի հետ կապվել եմ առաջին իսկ օրից, և կապի ավարտը տխրեցնում է: Իմ հարազատ բուհին շնորհակալ եմ ինձ հենց այսպիսին դարձնելու համար: Առաջին օրերից իսկ դարձել եմ ուսանողական խորհրդի անդամ, որը պարզվեց մի մեծ ու հզոր ընտանիք էր ու որ ինձ դեռ շատ ասելիք ուներ: Այնուհետև դառնալով ֆակուլտետի ուսանողական խորհրդի անդամ՝ վայելել եմ իմ բուռն ուսանողական կյանքը: Իմ կյանքի ամենախենթ ու ամենասիրուն տարիների սկիզբը դրվեց հենց այստեղ: ՀՊՄՀ-ն մի մեծ ընտանիք է, որտեղ բոլորը պատրաստ են օգնել միմյանց, որտեղ առաջին դեմքը ուսանողն է: Եթե հնարավորություն լիներ կյանքումս նորից ընտրելու, ես էլի կընտրեի ՀՊՄՀ-ն ու էլի Օտար լեզուների ֆակուլտետի գերմաներեն լեզվի և գրականության բաժինը:

Շնորհակալ եմ հարազատ համալսարան՝ ՀՊՄՀ:

Շնորհակալ եմ հարազատ Օտար լեզուների ֆակուլտետ:

Մարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Օտար լեզուների ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ

Լույս է տեսել

Մանկավարժականի ներդրումն Արցախյան պատերազմում



Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, հրատարակվել է Տիգրան Պետրոսյանցի «Հայրենիքիք համար» կենսագրական հանրագիտարանը՝ նվիրված Արցախյան պատերազմի մասնակից համալսարանականներին:

Արցախյան պատերազմի մասին շատ անգամ ու շատերն են գրել: Հերթական անգամ ընթերցողի սեղանին է դրվել հանրագիտակ հերոսապատումը: Այս գիրքը պատերազմական անքակտելի ընթացքներն իրար կապող, տարբեր ժամանակներն իրար կամրջող իրական փաստերից է կազմվել: «Հայրենիքի համար» հանրագիտարանը կարդացվում է ցավով, հավատով, մեծ թախիծով և կորստի անդարձ կարոտով: Պատերազմը չարիք է, ունի իր չար օրենքները, և այս անգամ էլ հայը չպարտվեց, բայց, ավաղ, ունեցավ իր բազում նահատակները: Կռվող տղաներն ուժեղ էին, և ամեն մեկն ուներ առյուծի սիրտ:

Դեռևս 1988 թվականներից, երբ հայ ժողովուրդը դուրս էր եկել Ացախյան ազատագրական պայքարի, ոտքի կանգնեցին նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բազում դասախոսներ և ուսանողներ, ձևավորելով կամավորական ջոկատ: Անհրաժեշտ էր օգնության հասնել Արցախի պաշտպանական ջոկատներին, և այդ գործին միացան դասախոսներ Բենիկ Սիսյանը, Գուրգեն Ղուլղազարյանը, Սերգեյ Կարապետյանը, Կիմ Ղահրամանյանը: Զենք–զինամթերքի հայթայթման և Արցախ հասցնելու գործում ակտիվ մասնակցություն է ունեցել Ալեքսանդր Ղուշչյանը: Պրոֆեսոր Լևոն Հարությունյանի ջանքերով սննդամթերք և զինվորական հագուստ է ուղարկվել Արցախ:

Արցախյան առաջին պատերազմը շարք կանչեց շուրջ յոթանասուն մանկավարժականցիների, որոնցից տասնյոթը հավերժացան: Հայրենիքին իր պարտքը տալիս, մարտերում հերոսացավ նաև Մովսես Գորգիսյանը, ով ստեղծել էր «Անկախության բանակ» ջոկատը որպես ապագա ազգային բանակի հիմք:

1990 թվականի հունվարի 18-19-ին մասնակցել է Երասխի ինքնապաշտպանական մարտերին և զոհվել: Նա արժանացել է Հայաստանի Ազգային հերոսի կոչման:

2016 թվականի ապրիլի 2–ին թշնամին չորսօրյա պատերազմ սկսեց Արցախի դեմ: Երկրորդ պատերազմին մասնակցեցին մանկավարժական համալսարանի քսանից ավելի ուսանողներ, որոնք ծառայում էին Արցախի զինված ուժերի զորամասերում: Համալսարանի պարարվեստի մանկավարժության բաժնի առաջին կուրսի ուսանող Նորիկ Գասպարյանը հերոսաբար զոհվեց հանուն հայրենիքի:

Դաժան էր 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ուխտադրուժ պատերազմը: Այս պատերազմի գործողություններին մասնակցեցին նաև Արցախյան առաջին և երկրորդ պատերազմի մասնակիցների զավակները: Նրանց շարքերում էին Մանկավարժականի երկու հարյուրից ավելի ուսանողներ և շրջանավարտներ: Համալսարանի հարյուրավոր ուսանողներ պատերազմի քառասունչորս օրերին մասնակցում էին անհավասար մարտերի, նրանցից 35–ը հերոսաբար հավերժացան:

Արցախյան երեք պատերազմներին մասնակցել է շուրջ 310 մանկավարաժականցի: Նրանցից 53-ն ընկել են մարտում՝ հանուն Հայրենիքի:

Ճանաչենք աբովյանական հերոսներին: Նրանց ապրած կյանքը հայրենասիրության լավագույն դասն է սերունդների համար:

ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՊՄՀ գիտական գրադարանի ընթերցասրահների բաժնի պետ

Նոր հնարավորություններ, նոր հեռանկար

«Հայ կամավորական ցանց» ամերիկյան կազմակերպության հետ Մանկավարժական համալսարանը համագործակցության նոր հուշագիր է կնքել: Կազմակերպությունը նպատակ ունի Հայաստանում խթանել և բարելավել կրթությունը, ամրացնել ուսանող-ուսուցիչ գիտական կապերը՝ մեծապես նպաստելու գաղափարների և գիտելիքների փոխանակմանը: Ամերիկյան կազամակերպության հետ հուշագիրը ՀՊՄՀ-ի դասախոսներին և ուսանողներին հնարավորություն կտա նաև ակտիվորեն ներգրավվել կամավորական գործունեության մեջ, ինչպես նաև տարբեր երկրներից ժամանած կամավորների հետ աշխատել միջազգային մի շարք ծրագրերում:

Մանկավարժական համալսարանի ուսանողները որպես կամավոր կարող են գրանցվել «Հայ կամավորական ցանց» ամերիկյան կազմակերպության կայքէջին՝ https://amvn.org/:

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Սկզբնական կրթության և Մաքսիմ Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի Նախադպրոցական կրթության ֆակուլտետների, հայ և բելառուս գործընկերների համագործակցության արդյունքում լույս է տեսել «Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության հոգեբանամանկավարժական պրակտիկում» («Психолого-педагогический практикум по дошкольной педагогике и психологии») խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը:

Ձեռնարկի բովանդակությունը բավականին ընդգրկուն է՝ գիտամանկավարժական հետազոտության ժամանակակից մոտեցումներ, հոգեբանամանկավարժական պրակտիկումի կազմակերպման, նախադպրոցական կրթության սուբյեկտների հոգեբանական ուսումնասիրության մեթոդներ, ինչպես նաև նախադպրոցականի զարգացմանն ուղղված հիմնական մեթոդիկաներ:

Հրատարակված գրքի համահեղինակներն են ՀՊՄՀ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանը, ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ալլա Դալլաքյանը և Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական կրթության մեթոդիկաների ամբիոնի դոցենտ Ելենա Ռուբլևսկայան:

Ուսումնամեթոդական ձեռնարկը օգտակար կլինի մասնագիտական ֆակուլտետի ուսանողների, դասախոսների և նախադպրոցական կրթական հաստատությունների մանկավարժների համար:

Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաներն այցելեցին Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան

Երևանում ամառային արձակուրդներն անցկացնող ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաները տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի ուղեկցությամբ ուսուցողական-ճանաչողական նպատակով այցելեցին Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան: Նշենք, որ այս տարվա օգոստոսի 25-ին լրացավ մեծ բանաստեղծուհու մահվան 15-րդ տարելիցը: Մշակութային այդ օջախում նրանց ջերմ ընդունեց տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Արմենուհի Դեմիրճյանը, ով էքսկուրսավար Ռիտա Հարությունյանի հետ հայրենիք այցելած դպրոցականներին հանգամանորեն ներկայացրեց 20-րդ դարի նշանավոր հայ բանաստեղծուհու, գրողի և հրապարակախոսի անցած ստեղծագործական կյանքն ու գործունեությունը:

Դպրոցի աշակերտները ծանոթացան նաև Հայաստանի գրողների միության անդամներ Օլգա Դարյանի, Սաթենիկ Ղազարյանի, գրող և հրապարակախոս Սեյրանուհի Գեղամյանի, հասարակական գործիչ Էմմա Այվազյանի հետ, ովքեր պատմեցին Սիլվա Կապուտիկյան գրողի մասին, ինչպես նաև ներկայացրին իրենց ստեղծագործությունները:

Դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանը Կոմիտասի անվան պանթեոնում մասնակցեց Սիլվա Կապուտիկյանի հիշատակի 15-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը, ուր հարգանքի տուրք մատուցվեց մեծ բանաստեղծուհու շիրիմին: Միջոցառումն ավարտվեց Սիլվա Կապուտիկյանի «Երդում Արարատին» նոր հրատարակված գիրք-օրացույցի շնորհանդեսով:

Այց Եռաբլուր և Ծիծեռնակաբերդ

Օգոստոսի 13-ին Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաներն այցելեցին ՀՀ պաշտպանության նախարարության «Եռաբլուր» զինվորական պանթեոն ազգային ռազմական հուշահամալիր: Ընդգծենք, որ դպրոցի համար այս բացառիկ կարևոր միջոցառումն ուղեկցել է ու բազմաթիվ արժեքավոր դրվագներ պատմել ՀՀ Պաշտպանության նախարարության զինծառայող, արցախյան վերջին պատերազմում 44 օր հերոսաբար մարտնչած փոխգնդապետ Սմբատ Քառյանը, ով ռազմական գործողությունների ժամանակ ստացել է բազմաթիվ բեկորային վնասվածքներ:

Այցելությունը սկսվեց Վարդանանց սուրբ նահատակների եկեղեցուց, որտեղ մոմեր վառվեցին հայրենիքի խաղաղության ու անդորրության համար: Այնուհետև մասնակիցները շարժվեցին դեպի հայրենիքի համար տարբեր տարիների իրենց կյանքը նվիրաբերած նահատակների շիրիմները:

Դպրոցի սաներն այցելեցին նաև 1967 թվականին հիմնադրված «Ծիծեռնակաբերդ» պատմահնագիտական համալիր, որտեղ ծաղիկները դնելով իրենց խոնարհումի տուրքը մատուցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ովքեր նահատակվեցին հանուն հավատի և հայրենիքի:

Ուխտագնացության վերջում աշակերտները նշեցին, որ այժմ էլ ավելի լավ են պատկերացնում հայոց պատմության էջերը, որոնց մասին բազմիցս խոսվել է դպրոցում «Հայրենագիտության» դասերի ընթացքում:



ՊՈԵԶԻԱՅԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԵՆՔ ԼՌՈՒՄ ԵՆՔ...

«Ոչինչ չէր պատահի, եթե չլինեին բանաստեղծությունները: Աշխարհն, իհարկե, փուլ չէր գա, բայց հոգևոր առումով աղքատ կլիներ: Երբեմն մենք պարզապես չենք նկատում, բայց պոեզիան միշտ մեր կողքին է: Ուղղակի պետք է կարողանալ տեսնել և զգալ «գեղեցիկը մեր կյանքում». այսպես սկսեց իր տողերը գրող, բանաստեղծ, «Կետադրիր ինքդ» գրքի հեղինակ Մարինա Զագրեբելնյան: Երիտասարդ գրող, որն աշխարհը տեսնում և ընկալում է այլ աչքերով: Խոսելով գրքի մասին, թե ինչու հենց «Կետադրիր ինքդ», պարզաբանեց՝ գիրքը սիրո մասին է, և ամեն մեկս այս կյանքում սերը ընկալում ու փոխանցում ենք յուրովի, ու ամեն մեկը փորձում է դնել սիրո իր կետադրական նշանը. մեկի համար սերը հնչում է հարցականով, մեկի համար, երբ ասում ես այդ բառը, դնում է վերջակետ, մեկը՝ ստորակետ, ամեն բանաստեղծության վերջում ընթերցողը հնարավորություն է ունենում ինքը կետադրել բանաստեղծությունը, այսինքն՝ ինքն այդ բանաստեղծությունը կարդալով ինչ զգաց, հետո սերը իր մոտ ոնց փոփոխվեց: Մարինայի խոսքով, երբ նա գիրքը տվեց գրախանութ, շատերը մտածում էին, որ այդ գիրքը քերականության հետ ինչ-որ կապ ունի, այո՛, կապ ունի, բայց կյանքի քերականության հետ, ասաց նա: Վերադառնալով գրքին՝ նշեց, որ գիրքն ունի հինգ հեղինակ, քանի որ կան շատ տաղանդավոր երիտասարդներ և բոլորն էլ ունեին սիրո մասին բանաստեղծություններ, որոնք միավորեցին իրար հետ և հրատարակեցին այդ գիրքը, նրա խոսքով հետաքրքիրն այն էր, որ բոլորի մոտեցումները, գաղափարները, ամեն ինչ շատ տարբեր էին, բայց երբ դու աշխատում ես իրենց համար և հանուն գործի, այլ ոչ թե քեզ համար, ոչ մի խնդիր չի լինում: «Սեր», «բաժակ», «քանոն», «մատիտ»... բոլորն էլ բառեր են, սերն էլ է բառ, բայց այդտեղ թաքնված է ամեն մեկի աշխարհը, վերաբերմունքը, պատկերացումները». այսպես է պատասխանում Մարինան այն հարցին, թե ինչ է սերը, հավելելով, որ սերն իր համար վերաբերմունք է, մոտեցում, որոշում, սերը գիտակցված ընտրություն է: Նա սխալ է համարում այն արտահայտությունը, երբ ասում են՝ սերը քիմիա է:

«Պոեզիան զարմանալի բան է, այն ստիպում է նորովի և յուրովի նայել աշխարհին, այն մեզ վեր է հանում առօրյա գորշ աշխարհից և հոգեպես հարստացնում է, օգնում է մեզ լինել ավելի բարի ու վճռական: Պոեզիայի աշխարհում մենք լռում ենք, իսկ մեր սիրտը՝ խոսում»:

Մարինա Զագրեբելնյան այսպես է նկարագրում պոեզիան, շարունակելով խոսքը՝ իր ամբողջ կյանքը պոեզիա է. «Երբ քայլում եմ փողոցում, երբ խոսում եմ, իմ ամեն մի քայլը պոեզիա է»: Նա ոչ միայն «Կետադրիր ինքդ» գրքի հեղինակն է, այլ նաև ունի տարբեր գրքեր, որոնք դեռ հրատարակված չեն, նրա խոսքով մոտ ապագայում կիրատարակվեն այդ գրքերը: Մարինան նշում է, որ իր մյուս գրքերը պոեզիայի մասին չեն. «Ես աշխատում եմ երեխաների հետ երկար տարիներ, և գրքերից երկուսը վերաբերվում են մանկական դաստիարակությանն ու յուրովի մոտեցմանը՝ դեպի երեխաները»: Նրա խոսքով այժմյան մոտեցումները սխալ են, քանի որ սահմանափակումները, արգելքները շատ են: Հիմա երեխաներին չեն թողնում գնալ իրենց ուզածի հետևից:

Մարինան բանաստեղծություններ գրելուց բացի նաև ունի պատմվածքներ, որոնցից մեկը կոչվում է «Одинаковые люди или человек N 3»: Գրքում խոսվում է այն մասին, թե մարդիկ որքան են նմանվել իրար: Նրանք տեսքով տարբեր են, բայց նրանց մտածելակերպը, շարժուձևը, հագուստը նույնն է, այդպես հարմար է, նրանք ունենում են խնդիրներ, բայց դրանք ավելի պարզունակ են լինում: Եվ վերջում, Մարինա Զագրեբելնյան իր ասելիքը ուղղեց ընթերցողին, որ չմոռանան բարու մասին, չմոռանան իրենք իրենց մասին ու չմոռանան՝ ինչ է սերն՝ իր բոլոր հասկացողություններով: «Տարածեք լույս և արև, եղեք լույս և արև»,- ասաց Մարինան:

Մանե ԳԵՎՈՐԳՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
լրագրության բաժնի 2-րդ կուրս

Ուսանողի օրագրից

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՌԸ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատերազմի դառը հիշողություններն անխիղճ դահիճներ էին հոգուս համար, որ ամեն անգամ հիշելիս մի ծանր հարված էր ստանում հոգիս... Լուսաբաց էր... սքողված սարսափի վարագույրներով: Լուսաբաց, որ բացվելուն պես պիտի խավարեր: Ու պատերազմն իր խավարասփյուռ թևերով խավարեցրեց... Իր սուր մագիլներով խլեց ու հոշոտեց ամեն բան, փոխարենն ի՞նչ տվեց՝ անսահման կարոտ ու անդարման ցավ: Հիմա հոգուս անկյունում տխուր խորհում եմ՝ ինչքա՜ն Օբերոներ գնացին անվերադարձ, ինչքա՜ն Սաթենիկներ մնացին նրանց հավերժ սպասելով... Ինչքան ծաղիկներ դեռ չծաղկած ձմռան սառը շունչը զգացին դեռ քսան գարուն էլ չապրած... Ինչքան Հայաստան մայրիկներ մնացին կարոտի ճահճում խեղդված... Դեռ ինչքան պիտի դարավոր պատմությունը մեզ սովորեցնի, որ պարտության հիմնաքարը անմիաբանությունն է ու փողը, ռազմիկի կյանքից վեր դասողներն են, այն ռազմիկի, որ հանուն հայրենիքի պատրաստ է ամեն ինչի, պատրաստ է գնալ մինչև վերջ, գիտակցելով, որ կնայի մահվան աչքերին ու մահը կսարսափի խրոխտ հայացքից:

Սա է ամենամեծ հաղթանակը, որ կարող է կերտել ռազմիկը երկրի երեսին: Իսկ դո՛ւ, աշխա՛րհ, դուրս արի քո խուլ ու համր դերից, հպարտ կեցվածքով առաջ մի անցիր, մի պահ ետ նայիր, տես, որ կա Աստծո դատաստան, որի առաջ պիտի պատասխան տաս:

Շուշանիկ ԱՍԼԱՆՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ՝ հոգեբանություն բաժնի 2-րդ կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 16.09.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ